ՎԴ5/0245/05/25

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4 օգոստոսի 2025 թվական ք. Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ5/0245/05/25 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 14-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Կարեն Բաղալյանը 2025 թվականի մայիսի 2-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի՝ Գյումրի համայնքի ղեկավարի՝ 2025 թվականի ապրիլի 22-ի

թիվ 15 արձանագրությունը՝ իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի հունիսի 20-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

3. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ, գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հուլիսի 21-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածին, 210-րդ հոդվածի 1-ին մասին, 21-րդ հոդվածին, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասին, 3-րդ հոդվածի 1-ին մասին, 4-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերին, 5-րդ հոդվածի 3-րդ մասին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11 գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ ՀՀ վարչական դատարանը 2025 թվականի հունիսի 20-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. «*(...) Տվյալ դեպքում Դատարանը փաստում է, որ սույն գործով ներկայացված հայցապահանջով հայցվորը խնդրել է անվավեր ճանաչել Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անդամ Կարեն Հրայրի Բաղալյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին» թիվ 15 արձանագրությունը, այսինքն՝*

ներկայացված պահանջը վերաբերում է հանրային ծառայության դադարման շուրջ ձևավորված իրավահարաբերություններին, որի ենթակայությունը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխով սահմանված կանոններին համահունչ, վերապահված է Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին, ուստիև պետք է փաստել, որ տվյալ դեպքում հայցվորի իրավունքներին բուն միջամտությունը և ըստ այդմ՝ դրա հիմքում առկա վեճը, ծագում է ոչ թե հանրային իրավահարաբերություններից, այսինքն՝ հանրային իշխանական լիազորություններով օժտված որևէ սուբյեկտի իշխանական-կարգադրիչ գործունեությունից, գործողությունից կամ անգործությունից, այլ ուղղակիորեն վերաբերում է համայնքի ավագանու անդամի՝ որպես հանրային ծառայողի, գործունեության դադարման կապակցությամբ ձևավորված աշխատանքային իրավահարաբերություններին, որոնց շուրջ ծավալվող վեճերի լուծումը հնարավոր է միայն քաղաքացիաիրավական (այդ թվում՝ դատավարական) նորմերի կիրառմամբ:

Ասվածի համատեքստում Դատարանը ներքին համոզմունք է ձևավորում առ այն, որ սույն գործը, որի լուծման արդյունքում կարող են վերականգնվել հայցվորի ենթադրյալ խախտված իրավունքները, բխում է ոչ թե հանրային, այլ մասնավոր իրավահարաբերություններից, քանի որ գործի հիմքում դրված և Դատարանի քննությանը վերապահված վեճը թեև ֆորմալ առումով ձևակերպված է հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի դեմ, այդուհանդերձ, բովանդակային առումով ամբողջովին ուղղված է հանրային ծառայության դադարեցման շուրջ ծավալված աշխատանքային վեճի լուծմանը, ինչը որևիցե կերպ կապված չէ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի կողմից իր իշխանական-կարգադրիչ գործունեության իրականացման հետ և ըստ այդմ՝ չունի հանրային բնույթ, ավելին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխով սահմանված կանոններին համահունչ, նմանաբնույթ վեճերի լուծումը վերապահված է Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ սույն վեճը չի ծագում հանրային իրավահարաբերություններից, ուստի դրա հիման վրա հարուցված գործը ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին և ենթակա է վերահասցեագրման առաջին ատյանի ընդհանուր իրավասության համապատասխան դատարան»[1]:

6. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 26-րդ հոդվածի 2-րդ մասին, 210-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերին, 19-րդ հոդվածին, 53-րդ հոդվածի 1-ին մասին, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերին, 5-րդ հոդվածի 1-ին ու 3-րդ մասերին, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերին, 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ, 11-րդ ու 24-րդ կետերին, 59-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերին, 70-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին, նույն հոդվածի 4-րդ ու 5-րդ մասերին, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերին՝ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ քննության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ու այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. «*(...) Այսպիսով, նկատի ունենալով, որ համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամի պաշտոնները համայնքային քաղաքական ընտրովի պաշտոններ են, ուստի Դատարանի գնահատմամբ համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամի միջև աշխատող-գործատու աշխատանքային փոխհարաբերությունը և հետևաբար դրա արդյունքում աշխատանքային վեճի հնարավորությունը բացակայում է:*

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը հստակ սահմանում է այն պաշտոնները, որոնց նշանակման և ազատման լիազորությամբ օժտված է

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 30-34:

համայնքի ղեկավարը, մինչդեռ Դատարանի գնահատմամբ ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, որի վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից կազմվում է արձանագրություն, չի կարող դիտարկվել որպես վերջինիս հանրային ծառայությունից ազատում, նախ այն պատճառաբանությամբ, որ համայնքի ղեկավարը այդպիսի լիազորություն չունի և բացի դրանից համայնքի ղեկավարի կողմից կազմված արձանագրությունը դեռևս բավարար չէ արձանագրելու համայնքի ավագանու անդամի լիազորությունների դադարեցման փաստը, քանի որ այդ գործընթացը ամփոփվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից յոթ աշխատանքային օրվա ընթացքում ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին արձանագրությամբ, որի վերաբերյալ տվյալները սույն գործում բացակայում են:

Հաշվի առնելով, որ վերոշարադրյալում Դատարանը եկել է այն եզրահանգման, որ սույն գործով բացակայում է հանրային ծառայությունից ազատելու հետ կապված աշխատանքային վեճը, գտնում է, որ գործը պետք է շարունակվի քննվել ՀՀ վարչական դատարանի կողմից»[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ5/0245/05/25 գործն ըստ Կարեն Բաղայանի հայցի ընդդեմ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի՝ Գյումրի համայնքի ղեկավարի՝ 2025 թվականի ապրիլի 22-ի թիվ 15 արձանագրությունը՝ իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին*:

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

---

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 42-47:

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի

բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի՝ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը գործող խմբագրությամբ 1-ին կետի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝ հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը»:*

2024 թվականի մայիսի 2-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-220-Ն ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ *«2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (...) 10-րդ հոդվածում 1-ին մասի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել»:*

Նշվածի համատեքստում անդրադառնալով հանրային ծառայության շուրջ ծագող իրավահարաբերությունների առանձնահատկություններին՝ հարկ է նշել հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածի համաձայն՝ *«Յուրաքանչյուր քաղաքացի ունի ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով»:*

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները*»:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային»*:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Համայնքային պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական և հայեցողական»*:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Համայնքային քաղաքական պաշտոններն են համայնքների ղեկավարների և նրանց տեղակալների, համայնքի ավագանու անդամի պաշտոնները»*:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, եթե՝*

1) դադարել են ավագանու լիազորությունները.

2) նա կորցրել է համայնքի ավագանու ընտրական իրավունքը.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նա անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած է ճանաչվել.

4) նա ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ դիմում է ներկայացրել.

5) նա ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու պահից մեկ շաբաթվա ընթացքում այդ մասին գրավոր չի տեղեկացրել համայնքի ղեկավարին.

6) նա հրաժարական է տվել»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում, բացառությամբ 1-ին կետով նախատեսված դեպքի, համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա համայնքի ղեկավարը, իսկ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում նաև համայնքի ղեկավարի պաշտոնակատարը կամ աշխատակազմի քարտուղարը կազմում են ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրություն և յոթ աշխատանքային օրվա ժամկետում ուղարկում ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:*

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը ավագանու անդամի հրաժարականի մասին դիմումն ստանալուց հետո՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում, կազմում է ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին արձանագրություն»:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումն անձամբ ներկայացնում է համայնքի ղեկավարին կամ համայնքի ղեկավարի պաշտոնակատարին, որն այն հրապարակում է ավագանու առաջիկա նիստում: Համայնքի ղեկավարի կամ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի բացակայության դեպքում ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումն անձամբ ներկայացնում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին: Մինչև նորընտիր ավագանու առաջին նիստի գումարումն ընկած ժամանակահատվածում ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումն անձամբ ներկայացնում է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով (...)»:*

9. Նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ

մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Ընդ որում, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա այն բոլոր գործերը, որոնք վերապահված չեն մասնագիտացված դատարանների, այդ թվում՝ ՀՀ վարչական դատարանի ենթակայությանը:

Հարկ է նշել, որ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը ՀՀ վարչական դատարանի ենթակայությանը վերապահված էին նաև հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը: Մինչդեռ 2025 թվականի հունվարի 1-ից օրենսդիրը նշված գործերի քննությունը վերապահել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների քննությանը՝ ՀՀ վարչական դատարանի քննությանը թողնելով միայն մինչև 2025 թվականի հունվարի 1-ը նշված վեճերով ներկայացված հայցադիմումները, որոնք արդեն իսկ վարույթ են ընդունվել վարչական դատարանի կողմից:

Այսինքն՝ 2025 թվականի հունվարի 1-ից հետո, ՀՀ վարչական դատարանն իրավասու է քննելու հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված միայն այն վեճերը, որոնց վերաբերյալ ներկայացված հայցադիմումները ՀՀ վարչական դատարանը վարույթ է ընդունել մինչև 2025 թվականի հունվարի 1-ը:

Անդրադառնալով ավագանու անդամի լիազորությունների դադարեցման շուրջ ծագած իրավահարաբերությունների բնույթի բացահայտմանը՝ հարկ է նշել, որ համայնքի ավագանու անդամի պաշտոնը դասվում է հանրային ծառայության

քաղաքական պաշտոնների շարքին, որպիսի պաշտոնից բխող լիազորությունների դադարեցմանը բնորոշ են որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես՝ ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերից է, ի թիվս այլնի, վերջինիս կողմից ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ դիմում ներկայացնելը, որի դեպքում համայնքի ղեկավարը կազմում է ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրություն և յոթ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: Իր հերթին, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը ավագանու անդամի հրաժարականի մասին դիմումն ստանալուց հետո՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում, կազմում է ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին արձանագրություն:

Վերոգրյալից հետևում է, որ ավագանու անդամի լիազորությունների դադարեցման ընթացակարգն ընդգրկում է համայնքի ղեկավարի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից համապատասխան արձանագրությունների կազմման գործընթացը, որոնցով, ըստ էության, հաստատվում է ավագանու անդամի լիազորությունների դադարման փաստը: Այսինքն՝ արձանագրությունների կազմումը տվյալ դեպքում արտահայտում է համայնքի ավագանու անդամի լիազորությունների դադարման ձևը և որևէ կերպ չի կարող ազդել նշված իրավահարաբերությունների բնույթի վրա:

Այլ կերպ ասած՝ համայնքի ավագանու անդամը՝ որպես հանրային ծառայող, ազատվում է իր զբաղեցրած պաշտոնից՝ համայնքի ղեկավարի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունների հիման վրա, որոնցով հաստատվում է վերջինիս լիազորությունների դադարեցված լինելու փաստը:

10. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Կարեն Բաղալյանը 2025 թվականի մայիսի 2-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի՝ Գյումրի համայնքի ղեկավարի՝ 2025 թվականի ապրիլի 22-ի թիվ 15

արձանագրությունը՝ իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին[3],

- հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի հունիսի 20-ի որոշմամբ վերահասցեագրվել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ սույն գործով ներկայացված պահանջը վերաբերում է համայնքի ավագանու անդամի՝ որպես հանրային ծառայողի գործունեության դադարման կապակցությամբ ձևավորված աշխատանքային իրավահարաբերություններին, որոնց շուրջ ծավալվող վեճերի լուծումը հնարավոր է միայն քաղաքացիաիրավական (այդ թվում՝ դատավարական) նորմերի կիրառմամբ[4],

- Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ եզրահանգել է, որ սույն գործով համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամի պաշտոնները համայնքային քաղաքական ընտրովի պաշտոններ են, ուստի համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամի միջև աշխատող-գործատու աշխատանքային փոխհարաբերությունը և հետևաբար դրա արդյունքում աշխատանքային վեճի հնարավորությունը բացակայում է: Բացի այդ, ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, որի վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից կազմվում է արձանագրություն, չի կարող դիտարկվել որպես վերջինիս հանրային ծառայությունից ազատում, նախ այն պատճառաբանությամբ, որ համայնքի ղեկավարը այդպիսի լիազորություն չունի, և համայնքի ղեկավարի կողմից կազմված արձանագրությունը դեռևս բավարար չէ՝ արձանագրելու համայնքի ավագանու անդամի լիազորությունների դադարեցման փաստը, քանի որ այդ գործընթացը ամփոփվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից յոթ աշխատանքային օրվա ընթացքում ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին արձանագրությամբ, որի վերաբերյալ տվյալները սույն գործում բացակայում են[5]:

---

[3] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[4] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[5] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

11. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է փաստել, որ սույն գործով Կարեն Բադալյանը, զբաղեցրել է Գյումրի համայնքի ավագանու անդամի պաշտոնը, որն ընդգրկված է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ համայնքային քաղաքական պաշտոնների շարքում: Այսինքն՝ սույն գործով հայցվորը, լինելով հանրային ծառայող, դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով դադարեցնել իր՝ որպես ավագանու անդամի լիազորությունները, այսինքն՝ իրեն ազատել իր զբաղեցրած հանրային ծառայության պաշտոնից: Ըստ այդմ՝ սույն գործով Կարեն Բադալյանի և Գյումրի համայնքի ղեկավարի միջև ծագած վեճը վերաբերում է Կարեն Բադալյանի՝ որպես հանրային ծառայողի լիազորությունների դադարեցմանը, որպիսի վեճը, 2025 թվականի հունվարի 1-ից հետո ենթակա է քննության ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից:

Ամփոփելով վերոգրյալը՝ պետք է արձանագրել, որ սույն գործով ներկայացված վեճը վերաբերում է ավագանու անդամի՝ այսինքն հանրային ծառայողի լիազորությունների դադարեցմանը, որպիսի վեճը բխում է մասնավոր իրավահարաբերություններից և ենթակա է քննության ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից:

12. Վերոգրյալից հետևում է, որ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ5/0245/05/25 գործն ըստ Կարեն Բադալյանի հայցի ընդդեմ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի՝ Գյումրի համայնքի ղեկավարի՝ 2025 թվականի ապրիլի 22-ի թիվ 15 արձանագրությունը՝ իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

Ուստի, Կարեն Բադալյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ5/0245/05/25 գործը ենթակա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ5/0245/05/25 գործն ըստ Կարեն Բաղալյանի հայցի ընդդեմ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի՝ Գյումրի համայնքի ղեկավարի՝ 2025 թվականի ապրիլի 22-ի թիվ 15 արձանագրությունը՝ իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ